Վավերացնում եմ	Հաստատված է
ՀՀ ԳԱԱ "Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն" ՊՈԱԿ-ի տնօրեն Սահակ Գասպարյան 23 դեկտեմբերի 2024թ	ՀՀ ԳԱԱ "Օրգանական և դեղագործական Քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն" ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի 2024թ դեկտեմբերի 16-ի թիվ 24 նիստի որոշմամբ Գիտական խորհրդի նախագահ՝ Սահակ Գասպարյան 17 դեկտեմբերի 2024թ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
ՀՀ ԳԱԱ "ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՊՈԱԿ-Ի ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ (ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՎԱՐԻՉ, ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ) ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանվում է ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ կազմակերպություն) գիտական ղեկավար պաշտոնների՝ գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարի (լաբորատորիայի վարիչ, խմբի ղեկավար) (այսուհետ՝ գիտահետազոտական ստորաբաժանման ղեկավարի) թեկնածուների առաջադրման, ընտրությունների անցկացման և պաշտոնի նշանակման կարգը:

1.2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ կազմակերպության կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքը, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» թիվ 1121-Լ և 2023 թվականի դեկտեմբերի 21-ի «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» թիվ 2298-Ն որոշումները, այլ հարակից օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր:

1.3. Գիտահետազոտական ստորաբաժանումը կազմակերպության գիտական գործընթացի կազմակերպման կառուցվածքային հիմնական ստորաբաժանում է, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա:

1.4. Գիտահետազոտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը համարվում է ընտրովի պաշտոն և ընտրվում է կազմակերպության գիտական խորհրդի կողմից՝ հինգ տարի ժամկետով (առնվազն 0.75 դրույք հաստիքով):

1.5. Մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներով ընտրությունների պայմանների և ժամկետի մասին մեկ ամիս առաջ տրվում է հայտարարություն:

1.6. Գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարի թափուր պաշտոնի համար թեկնածուներն առաջադրվում են կազմակերպության տնօրենի, գիտական խորհրդի անդամի և գիտահետազոտական համապատասխան ստորաբաժանման գիտական անձնակազմի կողմից կամ ինքնաառաջադրմամբ:

1.6.1. Թեկնածուների առաջադրումը դադարեցվում է ընտրությունից առնվազն 5 օր առաջ:

1.6.2. Կազմակերպության գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարների թեկնածուների առաջադրման համար փաստաթղթերը ներկայացվում են կազմակերպության գիտական քարտուղարին: Սահմանված կարգով (հիմք ընդունելով ատեստավորման կարգը 2023թ դեկտեմբեր 21-ի թիվ 2298-Ն որոշումը) գրանցվում են այն թեկնածուները, ովքեր գրավոր դիմում են ներկայացնում ընտրություններին մասնակցելու համար:

1.6.3. Գիտահետազոտական համապատասխան ստորաբաժանման գիտական անձնակազմն իր ժողովում քննարկում է տվյալ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի համար գրանցված բոլոր թեկնածուների թեկնածությունը և փակ գաղտնի քվեարկությամբ, գիտական անձնակազմի անդամների առնվազն երկու երրորդի մասնակցությամբ, կարծիք է հայտնում յուրաքանչյուր թեկնածության վերաբերյալ: Քվեարկության արդյունքների մասին կարծիքը տրամադրվում է թեկնածուին ընտրությանը մասնակցելու համար:

1.7. Կազմակերպության գիտահետազոտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում ընտրվելու մասին որոշումն ընդունվում է գիտական խորհրդի կողմից՝ փակ գաղտնի քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

1.7.1. Եթե քվեարկության 1-ին փուլում ընտրությունը չի կայանում, անցկացվում է քվեարկության 2-րդ փուլ: Եթե քվեարկության 2-րդ փուլի ընթացքում նույնպես ընտրությունը չի կայանում, ապա կազմակերպության տնօրենն ընդունում է որոշում գիտահետազոտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնակատարի նշանակման (մինչև 2 տարի ժամկետով) մասին և անցկացվում է նոր ընտրություն:

1.7.2. Գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարի թեկնածուն պետք է ներկայացնի իրատեսական, հիմնավորված և հավակնոտ ծրագիր:

1.7.3. Գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի թեկնածության բացակայության, ընտրությունը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքերում կազմակերպության տնօրենը իրավասու է մինչև 2 տարի ժամկետով Գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում նշանակել ժամանակավոր պաշտոնակատար, որը բավարարում է սույն ընթացակարգի Գիտական ստորաբաժանման ղեկավարի թեկնածուին ներկայացվող պահանջներին:

2. Գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարի պաշտոնի թեկնածուների ընտրության ներկայացվող պահանջները և նրա գործառույթները

2.1. **Գիտական խմբի ղեկավարի պաշտոնը** կարող է զբաղեցնել այն անձը, ով՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան կամ մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում,

2) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա մասնագիտություններով համահեղինակել է առնվազն չորս հրապարակում ՄԳՇ-ում կամ մեկ մենագրություն:

Գիտական խմբի ղեկավարը.

1) ղեկավարում, ուղղորդում և համակարգում է առանձին թեմաների շրջանակներում հետազոտություններ կամ մշակումներ իրականացնող գիտական խումբ՝ որպես պատասխանատու կատարող, ապահովում է իր ղեկավարած գիտական խմբի բարձր արդյունավետությունը,

2) տիրապետում է առնվազն իր ղեկավարության տակ գտնվող գիտական խմբի հետազոտությունների վերաբերյալ գիտական և գիտատեխնիկական ժամանակակից տեղեկատվությանը, կարողանում է ձևակերպել գրական ակնարկներ և ամփոփ տեղեկատվական նյութեր կամ հաշվետվություններ,

3) մշակում է հետազոտությունների կամ մշակումների իրականացման մեթոդաբանությունները, կազմում է դրանց ժամանակացույցը, կատարում է աշխատանքի բաշխում, ռեսուրսների գույքագրում և ձեռքբերում, ինչպես նաև համակարգում է այլ ստորաբաժանումների կամ կազմակերպությունների (այդ թվում՝ օտարերկրյա պետությունների) հետ աշխատանքները,

4) պատասխանատու է խմբի գիտական արդյունքների ամփոփման և միջազգային պարբերականներում հրատարակման, ինչպես նաև գիտական հարթակներում արդյունքների ներկայացումը կազմակերպելու համար, ունի ակտիվ գործնական կապեր և համագործակցություն իր ոլորտի միջազգային գործընկերների հետ,

5) կազմակերպում է աշխատողների ընտրության, պատրաստման և վերարտակավորման աշխատանքները (սեմինարների մասնակցություն, դիպլոմային կամ կուրսային կամ ավարտական աշխատանքների ղեկավարում, դասավանդում, մենթորություն) և, ըստ անհրաժեշտության, մասնակցում է այդ աշխատանքներին,

6) ըստ անհրաժեշտության, հանդես է գալիս իր մասնագիտության շրջանակներում որպես փորձագետ,

7) առաջնորդում և ղեկավարում է գիտական խմբի անձնակազմի գործունեությունը,

8) սահմանում և ղեկավարում է գործառնական և վարչական ընթացակարգերը, պլանավորում և ղեկավարում է ամենօրյա գործառույթները,

9) կազմում է հետազոտական ծրագրեր, սահմանում է իրականացվող հետազոտությունների ու մշակումների նպատակները և խնդիրները, կազմակերպում է դրանց իրականացումը, վերահսկումը և արդյունքների ամփոփումը:

2.2. **Գիտական ստորաբաժանման՝ լաբորատորիայի վարիչի** պաշտոնը կարող է զբաղեցնել այն անձը, ով՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան,

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ,

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանա-

կահատվածները) բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա մասնագիտություններով համահեղինակել է վեց հրապարակում ՄԳՇ-ում կամ առնվազն երկու մենագրություն, որոնցից առնվազն երեքում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:

Գիտական ստորաբաժանման՝ լաբորատորիայի վարիչը.

1) ղեկավարում է հետազոտական թեմաները կամ առաջադրանքները, համակարգում է հետազոտությունները կամ մշակումներն իրականացնող խմբի կամ խմբերի գործունեությունը, հետևում է աշխատանքի ընթացքին և համակարգում է համակատարողների աշխատանքները, ապահովում է իր ղեկավարած գիտական ստորաբաժանման բարձր արդյունավետությունը,

2) առաջարկում և հիմնավորում է գիտական հետազոտությունների նոր ուղղությունները, ներկայացնում է առաջարկություններ հետազոտական աշխատանքների նախագծերի և ծրագրերի վերաբերյալ, կազմակերպում է նախագծերի մշակումը և պատշաճ ներկայացումը,

3) կազմում է համալիր հետազոտությունների իրականացման մեթոդաբանությունը, ինչպես նաև կազմակերպում է այդ հետազոտությունների համար անհրաժեշտ ռեսուրսների գույքագրումը և ձեռքբերումը: Անհրաժեշտության դեպքում, ապահովում է այլ կազմակերպությունների (այդ թվում՝ օտարերկրյա պետությունների) հետ աշխատանքը,

4) պատասխանատու է գիտական արդյունքների ամփոփման և միջազգային պարբերականներում հրատարակման, ինչպես նաև գիտական հարթակներում արդյունքների ներկայացումը կազմակերպելու համար, ունի ակտիվ գործնական կապեր և համագործակցություն իր ոլորտի միջազգային գործընկերների հետ,

5) կազմակերպում է աշխատողների ընտրության, պատրաստման և վերարտակավորման աշխատանքները (վարում է դասընթացներ, սեմինարներ, ղեկավարում հետբուհական աշխատանքներ) և, ըստ անհրաժեշտության, մասնակցում է այդ աշխատանքներին,

6) ըստ անհրաժեշտության, հանդես է գալիս իր մասնագիտությանը համապատասխան ոլորտի շրջանակներում որպես փորձագետ,

7) մասնակցում է կազմակերպության գիտական ուղղությունների քննարկմանը, ինչպես նաև ռազմավարական առաջնահերթությունների մշակմանը,

8) ամփոփում է հետազոտությունների արդյունքները, որոշում է դրանց կիրառության ոլորտները, այդ թվում՝ հանրայնացման տեսանկյունից,

9) առաջնորդում և ղեկավարում է գիտական ստորաբաժանման անձնակազմի գործունեությունը,

10) սահմանում և ղեկավարում է գործառնական և վարչական ընթացակարգերը, պլանավորում և ղեկավարում է ամենօրյա գործառույթները,

11) առաջարկում և հիմնավորում է գիտական հետազոտությունների նոր ուղղությունները, ներկայացնում է առաջարկություններ հետազոտական աշխատանքների նախագծերի և ծրագրերի վերաբերյալ, կազմակերպում է նախագծերի մշակումը և պատշաճ ներկայացումը,

12) ապահովում է ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, վերահսկում է ծախսերը, հայթայթում և կառավարում է լրացուցիչ ֆինանսները:

3. Գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարի թեկնածուների առաջադրումը

3.1. Գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարի ընտրությունը նշանակվում է կազմակերպության տնօրենի հրամանով և ընտրությունների պայմանների և ժամկետի մասին մեկ ամիս առաջ տրվում է հայտարարություն մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներով՝ կազմակերպության կայքէջում և սոցիալական էջերում:
Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումի ներկայացման վերջնաժամկետը:
3.2. Գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարի թափուր պաշտոնի համար թեկնածուներն առաջադրվում են կազմակերպության տնօրենի, գիտական խորհրդի անդամի և գիտահետազոտական համապատասխան ստորաբաժանման գիտական անձնակազմի կողմից կամ ինքնաառաջադրմամբ:
Թեկնածուների առաջադրումը դադարեցվում է ընտրությունից 5 օր առաջ:
3.3. Առաջադրվող թեկնածուները գիտական քարտուղարին ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը /հայտ/.

1. Դիմում հասցեագրված տնօրենին
2. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
3. Աշխատանքային գրքույկից քաղվածք
4. Երկու լուսանկար /3 x 4/
5. Ինքնակենսագրություն
6. Բարձրագույն կրթության դիպլոմ(ներ)ի պատճեն(ներ)ը
7. Գիտական աստիճան(ներ)ը և գիտական կոչում(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը
8. Վերջին 5 տարում հրապարակած գիտական աշխատությունների և գյուտերի ցանկը (վավերացված վերջին աշխատանքի վայրի կնիքով)
9. Բնութագիր աշխատավայրից
10. Անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի (սոցքարտ) պատճենները
11. Տվյալներ պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ
12. Գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարի թեկնածուն ներկայացնում է նաև իրատեսական, հիմնավորված և միաժամանակ հավակնոտ, բեկումնային և գիտական կադրերի պատրաստմանը միտված գիտական նախագիծ, որն իրականացվելու է առաջիկա հինգ տարվա ընթացքում, 6-7 անձից բաղկացած գիտական անձնակազմի կողմից:

3.4. Փաստաթղթերի պատճենները ներկայացվում են բնօրինակների հետ: Գիտական քարտուղարը բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ստուգում է հայտի համապատասխանությունը սույն կանոնակարգի 3.3. կետում ներկայացված պահանջներին և վերադարձնում հավակնորդին՝ տրամադրելով փաստաթղթերի հանձնումը հավաստող տեղեկանք:

3.5. Փաստաթղթերի թերի լինելու դեպքում հավակնորդը այդ մասին տեղեկացվում է նույն պահին: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում:
3.6. Գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարի պաշտոնի հավակնորդի հայտը չի ընդունվում, եթե պահանջվող փաստաթղթերը լրիվ չեն կամ չի պահպանվել ներկայացման ժամկետը:
3.7. Հայտերի ընդունման ավարտի հաջորդ օրը գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ(ներ)ը ներկայացնում է կազմակերպության տնօրենին:
3.8. Գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարի պաշտոնի հավակնորդի դիմումը մերժվում է տնօրենի կողմից, եթե ներկայացված փաստաթղթերը չեն բավարարում մրցույթի պայմաններին:
3.9. Գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարի պաշտոնի համար առաջադրված կամ ինքնաառաջադրված թեկնածուները կարող են հետ վերցնել, հայտնել ինքնաբացարկ ընտրությունից առնվազն մեկ օր առաջ՝ այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով կազմակերպության տնօրենին:

3.9.1. Կազմակերպության տնօրենի կողմից մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած հավականորդի մակագրված դիմումը (կից փաստաթղթերով) հանձնվում է գիտական քարտուղարին գիտահետազոտական համապատասխան ստորաբաժանման գիտական անձնակազմում քննարկում կազմակերպելու համար:

3.9.2. Գիտահետազոտական համապատասխան ստորաբաժանման գիտական անձնակազմն իր ժողովում կազմակերպում է քննարկում հավակնորդի մասնակցությամբ, որի ժամանակ հավակնորդը ներկայացնում է իրատեսական, հիմնավորված և միաժամանակ հավակնոտ, բեկումնային և գիտական կադրերի պատրաստմանը միտված գիտական նախագիծ, որն իրականացվելու է առաջիկա հինգ տարվա ընթացքում, ստորաբաժանման գիտական անձնակազմի կողմից:

3.9.3. Բոլոր գրանցված թեկնածությունների վերաբերյալ, փակ գաղտնի քվեարկությամբ, գիտական անձնակազմի անդամների առնվազն երկու երրորդի մասնակցությամբ, կարծիք է հայտնվում յուրաքանչյուր թեկնածության վերաբերյալ:

3.9.4. Քննարկման և քվեարկության արդյունքների մասին արձանագրությունը ներկայացվում է գիտական խորհուրդ:

3.9.5. Կազմակերպության գիտական քարտուղարը, Գիտական խորհուրդի նիստից առնվազն 10-ն աշխատանքային օր առաջ դիմում ներկայացրած և Գիտահետազոտական համապատասխան ստորաբաժանման գիտական անձնակազմի ժողովում քննարկում անցած անձանց ցուցակը՝ դիմումը/ները/ (կից փաստաթղթերով) հանձնում է գիտական խորհրդի նախագահին մրցույթ կազմակերպելու համար: Գիտական խորհրդի նիստի օրվա, ժամի մասին և Մրցույթին մասնակիցների ցուցակը հավելված 1-ի ձևաչափով հրապարակվում է կազմակերպության կայքէջում և Գիտական խորհրդի նիստի մասին տեղեկացվում է թեկնածուներին:

3.9.6. Ընթացակարգի էական խախտումներ են՝ կեղծ փասթաթղթեր ներկայացնելը, դիմելու ընթացակարգը խախտելը:

3.9.7. Հարգելի են համարվում դժբախտ պատահարները, պետական, հասարակական, զինվորական պարտականությունները կատարելը, հիվանդությունը, արտակարգ դրությունը:

4 Գիտական խորհրդում ընտրության կազմակերպումը

4.1. Գիտական խորհրդում գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի թեկնածուների ընտրության օրակարգով գիտական խորհուրդը անցկացնում է բաց նիստ: Բաց նիստը վարում է Գիտական խորհրդի նախագահը: Գիտական խորհրդի բաց նիստին կարող են մասնակցել հրավիրված անձինք:
4.2. Նիստն իրավազոր է Գիտական խորհրդի կազմի առնվազն 2/3-ի ներկայության դեպքում:
4.3. Նիստում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ (կեսից ավելին), բաց քվեարկությամբ, եթե Գիտական խորհուրդն այլ կարգ չի սահմանում:
4.4. Գիտական խորհրդի անդամ գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի թեկնածուները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ, սակայն մասնակցում են քվեարկությանը:
4.5. Նախագահը հարցի քննարկումը սկսում է թեկնածուի(ների) առաջադրման գործընթացի վերաբերյալ տեղեկությունների տրամադրմամբ և ներկայացնում է թեկնածուների ցուցակը:
4.6. Առաջադրման գործընթացում սույն ընթացակարգի էական խախտումներ ի հայտ գալու դեպքում, Գիտական խորհուրդն իրավասու է հետաձգել նիստը 5 (հինգ) աշխատանքային օրով, իսկ խախտումներ թույլ տված անձին կամ անձանց զրկում է ընտրությանը մասնակցելու իրավունքից:
4.7. Նիստին գիտական ստորաբաժանման ղեկավարի թեկնածուների մասնակցությունը պարտադիր է: Թեկնածուի բացակայության դեպքում վերջինիս հարցը հանվում է քննարկումից, բացառությամբ Գիտական խորհրդի կողմից հարգելի համարվող դեպքերի: Հարգելի բացակայության դեպքում նիստը հետաձգվում է մինչև հարգելի համարվող դեպքերի ավարտի հաջորդ օրը:
4.8. Նախագահը հավակնորդի ծրագրային ելույթի համար (գիտական նախագիծ, որն իրականացվելու է առաջիկա հինգ տարվա ընթացքում, ստորաբաժանման գիտական անձնակազմի կողմից), ձայնը տալիս է գիտական ստորաբաժանման ղեկավարի թափուր պաշտոնի թեկնածուներին, ըստ այբբենական կազմած ցուցակի: Ելույթը տևում է 20-30 րոպե: Յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո նախագահի առաջարկությամբ գիտական խորհրդի անդամները և հրավիրված անձինք կարող են հարցեր ուղղել թեկնածուին: Հարցերը սահմանափակվում են նախագահի առաջարկությամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:
4.9. Թեկնածուների ծրագրային ելույթներից հետո սկսվում է թեկնածությունների քննարկումը: Յուրաքանչյուր թեկնածության քննարկումը տևում է 5-10 րոպե: Քննարկումների ավարտից հետո թեկնածուներին տրվում է լրացուցիչ ելույթի հնարավորություն մինչև 10-ը րոպե տևողությամբ:

5 Քվեարկության կազմակերպումը

5.1. Գիտական ստորաբաժանման ղեկավարի ընտրությունը Գիտական խորհրդի նիստում անցկացվում է փակ, գաղտնի քվեարկությամբ: Փակ, գաղտնի քվեարկու-

թյան համար ինքնաբացարկ չհայտնած թեկնածուների անուն ազգանունները գրանցվում են քվեաթերթիկում (Հավելված 2):
5.2. Նախագահի առաջարկությամբ և Գիտական խորհրդի որոշմամբ Գիտական խորհրդի անդամներից ձևավորվում է երեք հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
5.3. Քվեաթերթիկում գրվում են մեկ թեկնածուի կամ թեկնածուների անուն ազգանունները՝ այբբենական կարգով:
5.4. Հաշվիչ հանձնաժողովն ընտրելու իրավունք ունեցող, նիստին ներկա Գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամին տալիս է մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է Գիտական խորհրդի անվանացանկում:
5.5. Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում հաշվիչ հանձնաժողովի արձանագրություն (Հավելված 3): Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները:
5.6. Վավեր են համարվում այն քվերաթերթիկները, որոնցում «կողմ», «դեմ» կամ «բոլորին դեմ» սյուններում միայն մեկ թեկնածուի անվան դիմաց կատարված է «V» նշումը: Անվավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում կատարված են մեկից ավելի թեկնածուների անվան դիմաց «V» նշումը, քվեաթերթիկում չնախատեսված նշումներ:
5.7. Գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է Գիտական խորհրդի նիստին ներկա, քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին:
5.8. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները՝ յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, որից հետո Գիտական խորհուրդը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:
5.9. Հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալների հրապարակման արդյունքում Գիտական խորհուրդը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝
- գիտական ստորաբաժանման ղեկավարի ընտրվելու մասին,
- կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,
- ընտրությունները չկայացած ճանաչելու մասին,
- ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:

5.9.1. Մեկից ավելի թեկնածուների դեպքում որևէ թեկնածուի օգտին Գիտական խորհրդի քվեարկության իրավունք ունեցող նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին չհավաքելու դեպքում, Գիտական խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուն, կամ առավելագույն ձայներ ստացած առաջին թեկնածուն և առավել ձայներ ստացած երկրորդ և հաջորդ թեկնածուները, կամ հավասար առավելագույն ձայներ ստացած երկու և ավելի թեկնածուները:

5.9.2. Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն ընթացակարգին համապատասխան: Կրկնակի քվերկության դեպքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որը հավաքել է Գիտական խորհրդի քվեարկության իրավունք ունեցող և նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին:

5.9.3. Գիտական ստորաբաժանման ղեկավարի ընտրություն(ներ)ը համարվում են չկայացած, եթե՝

-գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի միակ թեկնածուն չի ստացել Գիտական խորհրդի նիստին ներկա քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին,

-կրկնակի քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել Գիտական խորհրդի նիստին ներկա քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին:

6. Գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում հրամանագրելու կարգը

6.1. Կազմակերպության տնօրենը Գիտական խորհրդի որոշումը հաստատվելուց հետո Գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում ընտրված անձի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

6.2. Գիտական ստորաբաժանման ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են. կազմակերպության կառուցվածքային փոփոխության դեպքում, երբ Գիտական ստորաբաժանումը լուծարվում է կամ Գիտական ստորաբաժանման ղեկավարի մահվան դեպքում կամ իր դիմումի համաձայն կամ կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքում:

7. Եզրափակիչ դրույթներ

Սույն ընթացակարգն ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի հաստատումից և տնօրենի վավերացումից հետո:

Սույն ընթացակարգում կատարվող լրացումներն ու փոփոխությունները, հավելվածները համարվում են սույն ընթացակարգի անբաժանելի մասը:

Հավելված 1.

ՀՀ ԳԱԱ “ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈ-ԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ” ՊՈԱԿ-Ի ---------- Գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի թեկնածուների ցուցակ					
Հ /Հ	Անուն, ազգանուն	Գիտական աստիճան, կոչում	Պաշտոն	Առաջադրող՝ ստորաբաժանումը, գիտական խորհրդի անդամը, տնօրենը, ինքնաառաջադրում	
1					
2					
3					

Հավելված 2.

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

ՀՀ ԳԱԱ “ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ-ԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ” ՊՈԱԿ-Ի Գիտական խորհրդի ____
ամսաթիվ, նիստի համար նիստում ----------
Գիտական ստորաբաժանման ղեկավարի փակ, գաղտնի քվեարկության

Հ/Հ	Թեկնածուի անուն, ազգանուն	Ստորաբաժանման անվանում	Կողմ	Դեմ	Բոլորին դեմ եմ
1					
2					
3					

«Կողմ» կամ «դեմ» լինելու դեպքում թեկնածուի անվան դիմաց քվեաթերթիկի համապատասխան վանդակում կատարվում է «V» նշումը: «Բոլորին դեմ» լինելու դեպքում «Բոլորին դեմ» սյունում կատարվում է «V» նշումը:

Հավելված 3.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Հաշվիչ հանձնաժողովի նիստի

ք. Երևան « » ____, 20__ թ.

ՀՀ ԳԱԱ “ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻ-ԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ” ՊՈԱԿ-Ի_____Գիտական խորհրդի նիստում հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է հետևյալ կազմով՝

1._____

2._____

3._____

Գիտական խորհրդի _____ անդամներից նիստին ներկա էին ____ հոգի: Քննարկվել է (են) _____Գիտական ստորաբաժանման ղեկավարի թափուր պաշտոնի հավակնորդի թեկնածությունը (ները):

Քվեարկությանը մասնակցել են Գիտական խորհրդի _____ անդամներ: Բաժանվել է _____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է ___ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

Հ/Հ	ԹԵԿՆԱԾՈՒ(ՆԵՐԻ) ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ

Անվավեր քվեաթերթիկների քանակը՝ _____:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով Գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում:

1. ընտրվել է (չի ընտրվել) ----------
_____
_____

2. Գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում Գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում,

3. ներքոնշյալ թեկնածուները՝

1) ___,

2) ___,

3) ___

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

4. Փակ, գաղտնի կրկնակի քվեարկության արդյունքներով__ Գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի թեկնածու _____ ստացել է, չի ստացել (ընդգծել)

5.Գիտական խորհրդի նիստին ներկա քվեարկության իրավունք ունեցող անդամնե-րի ձայների կեսից ավելին կամ կրկնակի քվեարկության արդյունքով թեկնածուները՝
1) ____
2) ____
3) ____
չեն ստացել Գիտական խորհրդի նիստին ներկա քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին:

6. Ընտրությունը համարել չկայացած:
Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ ___ Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝ __